հագոյնք են միմեանց և գերագանց ի բնաւից էից: Ուրաքանչիւր յիւրում սեռին և տեսակին մակաւասարէ անհամեմատ, և ոչ ումեք երևեցաւ այսպէս ունել զսոսա գեղեցիկ ի սկզբանէ աւուրց մինչև ցայսօր:

Սակայն սկսայց ի սկզբանէն և ի սեռականագոյն սեռէն՝ Թէպէտ և [Թզ. 9բ] ակներև է համայնից ազանց. քանզի ո՞ է այնպիսի խաւլ և շամբուշ[ա] և զաչացու որ անբաժ է յազգմանէ նշուլից լուսոյ սորա: Քանզի սերէ յԱբեղի՝[1] գեղեցիկ նահապետին՝ բնակչաց Եւրոպէոյ և Ասիո-ասիական վայրին, որոյ ընդարձակեաց Տէր, և բազմութիւն ազգաց և ազանց սերեաց ի նմանէ՝ մինչև նեղիլ վիճակի նորա և զեղանիլ յարկի հարազատին իւրոյ. բ հաստուցումն ընկալեալ փուլթանակի գ արգարւոյն:

Է և Թոռն Թորգոմեան. և ազն Ազքանազեան. ծնունդ Հայկեան՝ հաւուն Հայկազեան: Խայտականն[2] և քաջազանգրին, գեղազէշին, անձնէին և հաստաբազկին. որ խրոխ-

---

ա. «Շամբշագոյն եւ յոյժ խօլ է» Տես Փիլոն՝ Այլաբ. Սբ. գրոց:

բ. Ձեռ. Իւրն գ. Ձեռ. «փարթանակի», անհասկած աղաւաղուած է. իբրեւ անհասկանալի բառ ընդգծուած է:

1. Տ. Մ. Խորեն. Գ. Ա. գլ. ԺԲ:

2. Խոր. Գ. Ա. գլ. Ժ: